


Հրչպալլայի ընդհանուր քարտուղար շեյն Հասան Նասրալլա երկ հաւաքի մը ընթացքին արտասանած իր խօսքին մէջ արձագանգեց Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի այն յայտարարութիւններուն, թէ Հրչպալլայ ունի երեք հարիւր քմ. հաստղութեամբ հրթիռներ:

«Շարոն այդպէս կ'ըսէ, որովհետեւ կը պատրաստէ թղթածրար մը՝ հետագային պայն օգտագործելու համար Հրչպալլայի, Լիբանանի, Սուրիոյ եւ Իրանի դէմ. բայց ան միեւնոյն ատեն ահ ու սարսափի մատնեց Իսրայէլի ժողովուրդը», ըսաւ շեյն Նասրալլա:

Ան քաջատրեց, որ «եթէ «քարթիռա» տիպի հրթիռները 1996ին պատճառ դարձան եւ այսօր ալ կրնան պատճառ դառնալ երկու միլիոն Իսրայէլացիի դէպի կեդրոնական շրջաններ փախուստին, ապա ո՛ր փախուստ պիտի տան այսպէս ըսած հեռահաս հրթիռներէն, որոնց հաստղութեան ծիրէն ներս կ'իյնան Իսրայէլի բոլոր շրջանները»:

ՊԱՊՏԱՅԻ ՄԷՋ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՈՒԻԼԻԵՄ ՊԵՐԵՆՉ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՊԵՏԵՐՈՒՆ ՀԵՏ ԼԱՅՆՕՐԷՆ ԱՐԾԱՐԾԵՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ



Լահուտ եւ Պրընց

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Միլթին Արեւելքի Հարցերու օգնական Ուիլիլմ Պրընց երէկ կէսօրէ ետք Դամասկոսէն Պէյրութ ժամանեց՝ տեսակցութիւններ ունենալու համար իր քանանեան իշխանութեան երեք պետերուն եւ արտաքին գործոց նախարարին հետ:

Հանրապետութեան նախագահ գործիչ Լահուտի հետ տեսակցելէ ետք, Պրընց յայտարարեց, որ միջին արեւելեան իր շրջապտոյտին նպատակը միայն Ուաշինկթընի տեսակցութիւններու եւ մտահոգութեանց փոխանցումը չէ, այլ նաեւ շրջանի ղեկավարներուն հետ խորհրդակցելու ու անոնց տեսակցութիւններուն ծանօթանալը:

Պրընց ըսաւ, որ իսրայէլցիներու ընթացքին ինք չեչտր դրած է Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի իսրայէլի կողքին պաղեստինեան պետութիւն մը կերտելու հեռանկարը իրականացնելու գնահատման վրայ: «Միացեալ Նահանգներ յանձնառու կը մնան աշխատելու շրջանին մէջ ամբողջական իրազդուութեան հաստատումին եւ իրազդուութեան բանակցութիւններու բոլոր առանցքներու վերականգնումը, հիմնուելով Մատրիտի ժողովին որոշումներէն, ՍԱԿԻ որոշումներուն, նախագահ Պուշի միտքերուն եւ իրազդուութեան արարական նախաձեռնութեան վրայ», ըսաւ Պրընց, հաւաստելով, որ Ուաշինկթընի համար այդ նախաձեռնութիւնը խոստումնալից ըլլալէ չէ դադրած տակաւին:

Պրընց նաեւ յայտնեց, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է Միլթին Արեւելքի Հարցերու միջազգային քառանկամ յանձնախումբի ճիգերը՝ մշակելու իրազդուութեան հաստատման գործնական ծրագիր մը:

«Իրաքի Հարցին գծով նախագահ Պուշ կ'աշխատի ՍԱԿԻ նոր եւ ազդու որոշում մը ապահովելու, իսկ անոր կատարած յայտարարութիւնները ցոյց կու տան, որ պատերազմը անխուսափելի չէ, այլ վերջին ընտրանքն է եւ մեզի համար հիմնականը միջազգային որոշումներու գործադրութեան առնչութեամբ Իրաքի յանձնառութիւնն է», ըսաւ ան:

Պրընց այս առիթով կոչ ուղղեց բոլոր կողմերուն՝ «յարգելու Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլի Ապրիլին շրջան կատարած այլեւորութիւնները «կապույտ Գիծ»ին տիրած հանդարտութիւնը. սակայ առիթ մըն է նաեւ վերահաստատելու Միացեալ Նահանգներու յանձնառութիւնը արդար եւ վարչազուգումէն զերծ լուծում մը գտնելու հարաւային Լիբանանի ջոկի հարցին. արդէն այս գծով կ'աշխատինք իրանեան կառավարութեան, Իսրայէլի, ՍԱԿԻ եւ Եւրոպական Միութեան հետ: Նաեւ կը վերահաստատեմ մեր նախանձախնդրութիւնը Լիբանանի հետ մեր երկկողմանի յարաբերութիւններուն առնչութեամբ, իսկ իրանեանեան կառավարութեան ձեռնարկած տնտեսական ակնբեր բարեկարգումներուն շնորհիւ իրանեանեան տնտեսութիւնը կ'աճի եւ կը զարգանայ»:

Նախագահական պալատը յայտարարեց, որ հանրապետութեան նախագահ գործիչ Լահուտ Պրընցի հետ իր ունեցած տեսակցութեան ընթացքին անոր ըսաւ, թէ պաղեստինեան Հարցի որեւէ լուծում պէտք է հիմնուի ՍԱԿԻ որոշումներուն վրայ, որոնք Իսրայէլին կը պահանջեն հեռանալ ռուսագրաւուած շրջաններէն եւ լուծում մը գտնել զաղթականներու հարցին:

Պէյրութի մէջ գումարուած արաբական վեհաժողովի որոշումներն ու անոր որդեգրած իրազդութեան նախաձեռնութիւնը յստակօրէն անդրադարձան այս Հարցերուն, լայն անոնց տրուած պատասխանը իսրայէլեան ուժերուն կողմէ պաղեստինեան շրջաններու վերագրաւումն էր, յիշեցուց ան:

Իրաքի Հարցին մասին նախագահ Լահուտ ըսաւ, որ արաբական վեհաժողովը հաստատած է անհրաժեշտութիւնը ՍԱԿԻ Ապահովութեան խորհուրդի որոշումներու հիման վրայ իրազդ լուծումի, եւ Պաղատատ արդէն պատրաստակամութիւն յայտնած է ընդունելու ՍԱԿԻ գէնքի քննիչները:

Իսկ ինչ կը վերաբերի հարաւային Լիբանանի մէջ ջոկի հարցին, ապա նախագահը ըսաւ, որ Լիբանան

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒ ԸԱԿԱՉԴԵԼՈՒ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՆՁՆԱՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ, ՈՐ ԽԼԵՑ 14 ՉՈՐ ԵՒ ՊԱՏՃԱՒԵՑ ԱՒԵԼԻ ՔԱՆ 50 ԿԻՐԱԻՈՐ

Իսրայէլի մէջ պաղեստինեան անձնապանական գործողութիւն մը, որ 14 զոհ եւ աւելի քան 50 վիրաւոր պատճառած էր Երկուշաբթի օր, պատճառ դարձաւ, որ իսրայէլեան քաղաքական շարժումներ խիստ հակադարձութիւն մը պահանջեան կառավարութեանէն՝ արգելակելով Միլթին Արեւելքի մէջ լարուածութիւնը մեղմացնելու միտող ամերիկեան ճիգերը:

Իսրայէլեան քաղաքական աղբիւր մը հաղորդեց, որ կառավարութիւնը պիտի պատասխանէ, սակայն ոչ անմիջապէս: Ներքին գործոց նախարար էլի Եիշայ, որ ծայրայեղ կրօնական ճառ կու լուսակցութեան անդամ է, ըսաւ, որ թէեւ համաձայն է երկար ժամանակաշրջանի վրայ գործողութեան մը ձեռնարկելու ծրագիրին,

բայց եւեւնայպէս անհրաժեշտ կը նկատէ արագ ու խիստ հակադարձութիւն մըն ալ: Իսրայէլի կառավարութեան այլ աղբիւր մը յայտնեց, որ անձնապանական գործողութեան լոյսին տակ հաւանաբար վերատեսուցութեան պիտի ենթարկուի իսրայէլեան ուժերը Հեպոնի կարգ մը թաղամասերէն հեռացնելու ծրագիրը,



Ասատ կ'ընդունի Պրընցը

հակառակ անոր որ Ուաշինկթընը ճշուժ կը բանեցնէ Իսրայէլի վրայ, մեղմացնելու համար պաղեստինեան քաղաքներուն շրջափակումը:

Մինչ այդ, Նապոլուսի մէջ, իսրայէլեան ուժեր քանդեցին «ծայրայեղական» պաղեստինցիներու պատկանող երկու րնակարաններ, յայտնեց ըսաւ:

Երկուշաբթի օրուան անձնապանական գործողութիւնը զատապարտեց, տեղի Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ եւ ՍԱԿԻ ընդհանուր քարտուղար Քոլին Անան: Պուշ, որ ամերիկեան մասնաւոր պատերազմ Ուիլիլմ Պրընցը պիտի ենթարկուի իսրայէլեան ուժերը Հեպոնի կարգ մը թաղամասերէն հեռացնելու, շեշտեց

լով սակայն որ անիկա պիտի չարգելակէ զիւրանագիտական ճիգերը: Կրնախտեուելի, որ Պրընցը ինքնագոյնով կոչ ուղղէ պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն:

Պրընց զատապարտեց գործողութիւնը, զիտեղ տալով որ անիկա կը հարուածէ պաղեստինեան անկախ պետութիւն մը հաստատելու ծրագիրները: Պրընց աւելցուց, որ որեւէ մէկը որ իսկապէս կ'ուզէ իրազդութիւնը, չի կրնար հանդուրժել նման արարքներ:

Պրընց կը խօսէր Դամասկոսի մէջ, ուր տեսակցութիւն ունեցած էր նախագահ Պաշչար Ասատի հետ: Սուրիոյ նախագահը ըսաւ, որ Ուաշինկթընի առաջին քայլը

Շար-ը՝ Էջ 2

ԻՐԱՔԻ ՀԱՐՑՈՎ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԲԱՆԱԶԵԻԸ ԵՒՄ ԿԸ ԲԱԽԻ ՌՈՒՍԻՈՅ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ

Իրաքի դէմ պիւնուրական գործողութիւն մը անհրաժեշտ նկատող Միացեալ Նահանգներ ՍԱԿԻ Ապահովութեան խորհուրդին ներկայացուցին բանաձեւի նոր առաջարկ մը՝ յուսալով որ անիկա պիտի ապահովէ մնալուն անդամներուն հաւանութիւնը: Ուաշինկթընը ընդդիմութեան պատի մը ղիմաց գտած էր ինքզինք, երբ սպառնացած էր Իրաքի վրայ յարձակիլ՝ նոյնիսկ առանց ՍԱԿԻ հաւանութեան եւ տապալել Պաղատատի վարչապարզը:

Յուսալով, որ պիտի կարենայ քանդել ընդդիմութեան պատը, Ուաշինկթընը Երկուշաբթի երեկոյեան Ապահովութեան խորհուրդին սեփականութիւնը դարձուց նոր բանաձեւի մը առաջարկը, որ պիտի քննարկուի 15 անձնակազմի կողմէ:

Ուաշինկթընի նորագոյն ձեւը, սակայն, խիստ քննադատութեան ենթարկուեցաւ Ռուսիոյ եւ Թուրքիոյ կողմէ: «Ինքըրֆաքս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ նոր բանաձեւը յուսալարութիւն պատճառած է Ռուսիոյ, որ նկատած է, թէ առաջարկուած բանաձեւը չի տարբերի րոտաչիւն առաջարկէն, որ մերժուած էր Մոսկուայի եւ Ապահովութեան խորհուրդի այլ անդամներու կողմէ: Ուաշինկթընի դաշնակից Թուրքիա եւս քննադատեց Միացեալ Նահանգները, զիտեղ տալով, որ անոնք հակասական



Պիլքս՝ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի մօտ

լողմէ: «Ինքըրֆաքս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ նոր բանաձեւը յուսալարութիւն պատճառած է Ռուսիոյ, որ նկատած է, թէ առաջարկուած բանաձեւը չի տարբերի րոտաչիւն առաջարկէն, որ մերժուած էր Մոսկուայի եւ Ապահովութեան խորհուրդի այլ անդամներու կողմէ: Ուաշինկթընի դաշնակից Թուրքիա եւս քննադատեց Միացեալ Նահանգները, զիտեղ տալով, որ անոնք հակասական

լողմէ: «Ինքըրֆաքս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ նոր բանաձեւը յուսալարութիւն պատճառած է Ռուսիոյ, որ նկատած է, թէ առաջարկուած բանաձեւը չի տարբերի րոտաչիւն առաջարկէն, որ մերժուած էր Մոսկուայի եւ Ապահովութեան խորհուրդի այլ անդամներու կողմէ:

Շար-ը՝ Էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՆՎԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Հ. Յ. Դ. Ի ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ 80 ԱՌ ՀԱՐԻՐԸ ԸՆՏՐՈՒԱԾ Է

Հայաստանի Ազգային ժողովի Հ. Յ. Դ. պատգամաւորական խմբակցութեան նախագահ Աղուն Կարդանեան լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին երկ յայտարարեց, որ 20 Հոկտեմբերին Հայաստանի մէջ կայացած Տեղական Ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններուն՝ Հ. Յ. Դ. թեկնածուներուն շուրջ 80 առ հարիւր ընտրուած է: Աւելի քան 150 համայնքներու մէջ ընտրուած են Հ. Յ. Դ. պաշտպանած թեկնածուները, իսկ քաղաքներու մէջ նախնական արդիւնքներու համաձայն՝ յաջողած են երկու թեկնածուներ:

Աղուն Կարդանեան «Երասր» գնահատեց այս արդիւնքները, միաժամանակ ընդգծելով, որ ընտրութիւններուն ընթացքին եղած են խախտումներ, որոնք թէեւ ոչ մեծ տարողութեամբ, այսուհանդերձ պէտք է հետապնդուին եւ համապատասխան պատիժներ պէտք է տնօրինուին՝ կանխարգիլելու համար անոնց կրկնութիւնը նախագահական եւ խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններուն ընթացքին: «Ընտրացուցակները կը մնան չափապանց վատ վիճակի մէջ, եւ եթէ քաղաքական կամք դրսեւորուի, շատ կարճ ժամանակի ընթացքին կարելի է ամէն բան սրբագրել», դիտել տուաւ Կարդանեան:

Աղուն Կարդանեան յայտնեց, որ բաղդատմամբ նախորդ ընտրութիւններուն՝ քաղաքական ուժերը այս անգամ աւելի աշխուժ եղած են: Սակայն միւս կողմէ, ընդգրծեց Վարդանեան, ճիշդ չէր քաղաքական որոշումներու մօտեցումը՝ չմասնակցիլ ընտրութիւններուն: «Անոնք կան պատրաստ չէին, կամ չգնահատեցին ընտրութիւններու կարեւորութիւնը, կամ իրենք պիւրէնք ապահով պահեցին հաւանական ձախողութեան», ըսաւ ան:

ՈՒԱՇԻՆԿԵԹԸՆԻ ԱՐՁԱԿԱԶԵԻՆ ՏԱԿԱԻՆ ԿԸ ՄԵԱՅ ԱՆՅԱՅՏ, ԽԼԵԼՈՎ ՆՈՐ ՁՈՂԵՐ

Ուաշինկթընի մէջ մարդիկ ահ ու սարսափի մատնող արձակագիշտ տակաւին անգտանելի կը մնայ ոստիկանութեան կողմէ, որ երէկ առաւօտուն նոր մահափորձի մը շուրջ քննութիւն կը տանէր:

Ոստիկանութեան մէկ բանբերը յայտնած է, որ գոհը՝ 40 տարեկան օրոպիւսի վարորդ մը, կուրծքէն փամփուշտ մը ստացած է երբ օրոպիւս կը բարձրանար: Ան հիւանդանոց փոխադրուած է: Աւելի ուշ, ան մահացած է:

Իշխանութիւններուն համաձայն՝ նորագոյն դէպքը տեղի ունեցած է մայրուղիի մը վրայ, ուր շուրջ երեք շաբաթ առաջ արձանագրուած էին արձակագիշտի կողմէ առաջին քանի մը սպանութիւնները:

Սպանութեան դէպքերը շրջանի բնակիչները ահ ու սարսափի մատնած են: Դպրոցներ երկու շաբաթէ ի վեր հարիւր հազարաւոր աշակերտներ շէնքերէն ներս կը պահեն եւ մարդկան հանդիսութիւններ ու լացօթեայ գործունէութիւններ ջնջուած են:

Երկուշաբթի օր ոստիկանութիւնը յայտարարած էր, թէ Հարցին կապակցութեամբ երկու հոգի ձերբակալուած է: Աւելի ուշ, սակայն, ի յայտ եկած էր, որ անոնք ապօրինի զաղթականներ են:

Ոստիկանութիւնը կը յուսայ նաեւ դարձեալ լսել խորհրդաւոր անձ մը, որ հեռաձայնով հաղորդակցութեան մէջ մտած է անոր հետ: Կ'ենթադրուի, թէ ան 2 Հոկտեմբերէն ի վեր 9 հոգի սպանած եւ 3 հոգի վիրաւորած արձակագիշտն է:

Իրաքանչիւր զոհ փամփուշտի մէջ հարուածով սպաննուած է՝ հեռու հաստղութեամբ հրացանով մը: Սպանութեան մեծամասնութիւնը տեղի ունեցած է Ուաշինկթընի կից Մերիլենդ եւ Վերձինիա նահանգներուն մէջ:

Շար-ը՝ Էջ 10

(ՌՈՅԹԸՐԸ)

ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑԱԲ ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ԸՆՏ



Վարչապետը կ'ընդունի Տիուֆը

Վարչապետ Ռաֆիկ Շարիրի յառաջիկայ շաբաթավերջին պիտի սկսի երկօրեայ շրջապտույտ մը, որուն ընթացքին պիտի այցելէ Ծոցի երկիրներ՝ քննարկելու համար տնտեսութեան յատուկ «Փարիզ - 2» վեհաժողովի նախապատրաստական աշխատանքները, ինչպէս նաեւ շրջանային եւ միջազգային հարցեր:

Վարչապետ Շարիրի երէկ ընդունեց նաեւ Սուրիոյ եւ Յորդանանի փոխադրութեան հարցերու նախարարները՝ Մաքրամ Օպէյտը եւ Նատէր Տահապին: Ներկայութեամբ հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան միջոցներու նախարար Նեժիպ Միքաթիի եւ իր քանանէստորիական Գերագոյն Խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Սուրիի:

Վարչապետ Շարիրիի փոխանցեցին Լիբանան - Սուրիա - Յորդանան փոխադրութեան մարզի ծիրէն ներս համագործակցութեան նպատակով կայացած ժողովներուն արդիւնքները: Վերջապէս, վարչապետը երէկ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի, որուն հետ քննարկեց երկրին ու շրջանային վերջին իրադարձութիւնները:

Հանդիպումին ընթացքին ներկայները

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՈՒԻԼԻԲՄ ՊԸՐՆՁ...

Շարունակուած Ա. Էջէն

այս գծով մանրամասն տեղեկագիր մը ներկայացուցած է ՄԱԿի եւ կը սպասէ անոր պատասխանին: «Լիբանան ոտնձգութիւն չէ գործած եւ Ուաշինգտոնի ջուրէն անոր ցարդ օգտագործածը միայն մէկ մասն է իր իրաւունքներուն», աւելցուց ան:

Լրատու աղբիւրներու համաձայն՝ Պըրնզ նախագահ Լահուտի յայտնած է, որ Միացեալ Նահանգներ գործակից կը կանգնին Լիբանանի նուերատու երկիրներու եւ կազմակերպութիւններու «Փարիզ-2» ժողովի գումարումին, նկատի ունենալով որ այդ ժողովը զբաղուած անդրադարձներ պիտի ունենայ ընդհանուր կայունութեան ամրապնդումին իմաստով:

Պըրնզ այցելեց նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի եւ վարչապետ Ռաֆիկ Շարիրիի: Այն էլ թիկն է Գերագոյն Խորհուրդի կատարած իր այցելութիւններէն ետք Պըրնզ յայտնեց, որ Պըրրիի եւ Շարիրիի փոխանցած է Միացեալ Նահանգներու նախագահ Ճորժ Պուշի յետակ կեցուածքը՝ պաղեստինեւիստայէլեան անկախ պետութեան կայացման: Ան հաւաստեց նաեւ, որ Ուաշինգտոն ճիշդ չի խնայեր պաղեստինեւիստայէլեան տաղանայի լուծման դժուր խաղաղութեան քննարկութիւններու վերսկսման:

Պըրնզ կու ուղղեց նաեւ, որ հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿի ճշգրտ «Կապուտ Գիծ»ը խախտումի չենթարկուի իսրայէլեան թէ լիբանանեան կողմէն, իսկ Ուաշինգտոնի ջուրէրէն օգտուելու գծով չծագի որեւէ հարց, այլ երկու կողմերը յանգին արդար որոշումի մը:

ՔՐՐՆԷԹ ՇԱՀՈՒԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՐՈՒՄԸ

Քրրնէթ Շահուանի Հանդիպումը երէկ կայացուց արտակարգ նիստ մը, որմէ ետք իրապարակեց խիստ հաղորդագրութիւն մը իշխանութիւններուն դէմ:

Հաղորդագրութիւնը կառավարութիւնը պատասխանատու նկատեց երկրին մէջ տեղի ունեցած դէպքերուն եւ անմիջապէս պահանջեց անոր իրաւարականը՝ առիթ տալու համար նոր կառավարութեան մը կազմութեան: Կառավարութիւն մը, որ ունենայ ազգային պատասխանատուութեան գիտակցութիւն, որպէսզի ապաստէ Լիբանանը իր դժուրակ վիճակէն:

Հաղորդագրութիւնը կոչ ուղղեց լիբանանցիներուն՝ մասնակցելու 31 Հոկտեմբերին կայանալիք ցոյցին, բողոքելու համար կատարուած իրողութիւններուն եւ կառավարութեան դէմ եւ պաշտպանելու համար ապատուութիւնները:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԼԻԿԱՆԵՐ ԿԸ ՅԱՍՏՈՒՆ ՀԻՆԳՇԱՐԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Ուսուցիչներու սենտիքան եւ լիկաները, ինչպէս նաեւ պետական պաշտօնեաներու լիկաներ երէկ հրապարակուած հաղորդագրութիւններով եւ յայտարարութիւններով կրկնեցին Հինգշաբթի օր ընդհանուր գործադուլ կատարելու իրենց կոչը, բողոքելու համար 2003ի պետական պիւտճէի նախագիծին մէջ տեղ գտած նոր տուրքերուն եւ հին տուրքերու յաւելումներուն, ինչպէս նաեւ անարդար այլ միջոցառումներուն դէմ, եւ պահանջելու որ խորհրդարանը մերժէ վաւերացնել գանձուքը:

Այս իմաստով երէկ յայտարարութիւններ հրապարակեցին սեփական վարժարաններու ուսուցիչներու սենտիքայի Պէյրութի եւ հիւսիսի մասնաճիւղերը, Լիբանանեան համալսարանի դասախօսներու եւ պետական վարժարաններու երկրորդական, միջնակարգ եւ նախակրթարանի կարգերու ուսուցիչներու լիկաները եւ հիւսիսի ջուրի ընկերութեան պաշտօնեաներու սենտիքան:

Սեփական եւ պետական վարժարաններու, եւ Լիբանանեան համալսարանի դասախօսներու սենտիքաներու եւ լիկաներու պարտաւորութեանց համակարգումի մարմինը իր յայտարարութեան մէջ սպառնաց գործադուլէն ետք դիմել մագլցողական քայլերու:

ՇՐՋԱՊՏՈՅ
Լիբանանի անկախութեան տօնին առիթով, բացառիկ յայտագիրով եւ գինեղով, շրջապտույտ դէպի Շալէա, 22 - 25 Նոյեմբեր 2002ին:
Նախաճաշ, ընթրիք, խրախմանքներ, երկու աստղանի պանդոկ փոխան 120 \$, միայն 95 \$, իսկ յորս աստղանի պանդոկ փոխան 165 \$, միայն 130 \$:
Սահմանափակ տեղեր:
Արձանագրութիւններ ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐՁ, հեռ. 01 / 261177 - 240654 եւ 03 / 233978:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Վախէ Պերպրեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Ա. Եղիա - Ա. Գրիգոր Լուսաւորիչ Աթոռանիստ եկեղեցւոյ կատարած են հետեւեալ նուիրատուութիւնները:

- Տիկին Լեյլա Սուրուր 100,000 լ.ն., տրեւ տիկին Քիւզանդ Գեորգեան 100,000 լ.ն., տրեւ տիկին Յարութ Սամուէլեան 50,000 լ.ն., տրեւ տիկին Կարո Քիրիաքոս 50,000 լ.ն., տրեւ տիկին Ժան Գասապեան 50,000 լ.ն., տրեւ տիկին Նշան Կամսեմեան 50,000 լ.ն., տրեւ տիկին Նշան Կամսեմեան 50,000 լ.ն., տրեւ տիկին Սելբոն Խայեաթ 50,000 լ.ն., տրեւ տիկին տոքթ. Սիւաք Եղիայեան 50,000 լ.ն., տրեւ տիկին Դաւիթ Սեփեմեան 20,000 լ.ն., տրեւ տիկին Յակոբ Կամսեմեան 20,000 լ.ն., Շիրվանեան ընտանիք 20,000 լ.ն., Տուայի ընտանիք 20,000 լ.ն., տրեւ Թոնի Լեյլա 20,000 լ.ն., տիկին Տուհիա Սաուայա 20 \$, տոքթ. Նազարէ Արախամեան 20 \$, տրեւ Բամի Թարիք Ֆարահ 20 \$:

ՄԱՀԱՉԳ

Տիար Գէորգ Պոչնազեան եւ զաւակները՝ Յարութ, Հրայր եւ Շանթ Տէր եւ տիկին Ռուբէն Գիւլիանեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ճորժ Մուրատեան եւ զաւակունք Ժաք, Գօգօ, Աւետիս Պոչնազեաններ եւ ընտանիք Լեւոն, Վազգէն, Ալին Գարակէօզեան եւ ընտանիք Լեւոն, Բաֆֆի, Սեպուհ Մուրատեաններ եւ ընտանիք եւ համայն ազգականներ կը գովեն իրենց կնոջ, մօր, քրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ԳՈՂԱՐԻԿ ՊՈՇՆԱԳԵԱՆԻ (Շնեալ՝ ԳԻԼԻՄԱՆՃԵԱՆ, Հալէպ, 1932ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 20 Հոկտեմբեր 2002ին, Լոս Անճելըսի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ երեքշաբթի, 22 Հոկտեմբերին, Լոս Անճելըսի մէջ:

- Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային եղբօր Ռուբէն Գիւլիանեանի բնակարանը, Արգիէր, Գոնիախեան շէնք, Տրոյ յարկ:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Վախէ Պերպրեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի ԼՕՍԻ Շրջանային Վարչութիւնը 100,000 լ.ն. ԼՕՍԻ «Ա. Պուլիուրճեան» ընկերաբաժնկան կերտումին:

ՇՆՈՐԱԿԱԼԻՔ

Տիար Ջարեհ Սիրիճանեան եւ զաւակները՝ Փիրայր եւ Մայքըլ, տիկին Կամեստուհի Սիրիճանեան եւ տիկին Արմենուհի Զարակիլեյեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակցեցան իրենց կնոջ, մօր, զաւակին եւ հարազատին՝ ԼԵՆԱ ՍԻՐԻՃԱՆԵԱՆԻ մահուան սուգին:

ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԷՉ
ՕՐՀՆԷՄԵՉ
ՕՐՀՆԵԱԼ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԶՄՄԱՌ
Գինգաբքի, 24 Հոկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:00ին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Հովանաւորութեամբ՝ Մշակոյթի նախարար
ՂԱՍՍԱՆ ՍԱԼԱՄԻԻ
Կը ներկայացնէ
Հայրենի տաղանդաւոր եւ միջազգային դաշնակահար
ԱՐՄԷՆ ՊԱՊԱՆԱՆԵԱՆ
Երեքշաբթի, 29 Հոկտեմբեր 2002, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին,
A. U. B.ի ASSEMBLY HALLին մէջ:
●Տոմսերը ստանալ՝ Sodeco Square, Համազգայինի գրախանութ («Շաղոյեան» կերտում), «Լեւոն Շանթ» կերտում եւ ելոյթի օրը կիշէն:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔԵՐՈՒ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ «ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ»

Խորհրդարանը երէկ գումարեց իր տարեկան երկրորդ նստաշրջանի առաջին նիստը, զոր յատկացուց խորհրդարանի դիւանի եւ խորհրդարանական յանձնախումբերու անդամներու ընտրութեան:

Քառորդ ժամ տեւած նիստի բացումին, խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի խնդրանքով ժողովը վայրկեան մը յոտնկայս լուրեւաւ յարգեց յիշատակը նախկին երեսփոխան Ապտէլ Մեժիտ Չէյնի: Այնուհետեւ Պըրրիի ղեկավարութիւնը յայտնեց յանձնախումբերու ժողովներէն երեսփոխաններուն համար, դիտել տալով, որ առանց բանաւոր պատճառի բազմաթիւ նիստերէ բացակայած 17 երեսփոխաններէն վեցը ոչ մէկ նիստի ներկայ գտնուած է:

Ժողովը անցաւ դիւանի եւ յանձնախումբերու անդամներու ընտրութեան: Քուէարկութեան հարկ չեղաւ, որովհետեւ կապւեցրու «մանր» փոփոխութիւնները կատարուեցան համաձայնաբար: Այսպէս, միաձայնութեամբ ընտրուեցան դիւանի եւ յանձնախումբերու անդամները:

Փոփոխութիւններէն մէկը պաշտպանութեան հարցերու յանձնախումբին մէջ հանգուցեալ երեսփոխան Մուսթաֆա Սաատի արթոնի «գրաւումն էր» անոր եղբօր՝ Ուսամա Սաատի կողմէ: Կենսոյրտի յանձնախումբին մէջ իր տեղը Սաատի չիղջեցաւ երեսփոխան Ապտէլ Ռահման Ապտէլ Ռահման:

Երեսփոխաններ Ղաթթաս Սուրի եւ Ֆարիտ Մըքարրի համաձայնաբար փոխանակեցին առաջինի զաղթականներու եւ երկրորդին հանրօգուտ աշխատանքներու եւ փոխադրամիջոցներու յանձնախումբերուն մէջ իրենց տեղերը: Նոյն ձեւով Ալատտին Թըրրօ դարձաւ զաղթականներու հարցերու յանձնախումբի վեկուցաբեր, երեսփոխան Նապիլ Պուսթանիի տեղ:

ԿԱՊՐԻԷԼ ՍԸՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երեսփոխան Կապրիէլ Մըր նիստէն ետք յայտնեց, որ Քրրնէթ Շահուանի հանդիպումի անդամ երեսփոխաններ իրեն առաջարկած էին յանձնախումբերուն մէջ իրենց տեղերը, բայց ինք նախընտրած է սպասել իր ընտրութիւնը չեղեալ համարելու գծով Սահմանադրական Խորհուրդին յղուած դիմումին մասին փճիռի արդիւնքին: Մըր ըսաւ, որ ինք կը նախատեսէ,

որ Սահմանադրական Խորհուրդը մերժէ այդ դիմումը, «թէեւ երկիրը կը նախատեսէ, որ այդ դիմումին ընթացք տրուի»:

«Էմ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանին գծով նախանցեալ օր տրուած վճիռին մասին Մըր քննադատական խօսքերէն ետք պարմանք յայտնեց դատական իշխանութիւնը «Աստուծոյ պէս անսխալական համարող» յայտարարութիւններուն համար, ընդգծելով, որ Լիբանանի մէջ դատաւորները սխալական են եւ անոնց սխալները կը վարկաբեկեն պետութիւնը, որ անիմաստ կը դառնայ առանց պարկէշտ եւ քաղաքական միջամտութենէ հեռու դատական իշխանութեան:

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ԸԱԿԱԶԴԵԼՈՒ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

պէտք է ըլլայ վերջ տալ դաշնակից Իսրայէլի ձեռամբ կատարուող պաղեստինեան ջարդին: Աստ ըսաւ նաեւ, որ չի բաւեր միայն իօսիլ պաղեստինեան պետութեան մը մասին, այլ պէտք է ճշշում բանեցնել Իսրայէլի վրայ, որպէսզի վերջ տայ բռնարարներուն:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Արի Ֆլայշըր քննադատեց Եսաէր Արաֆաթի իշխանութիւնը, որ «չէ կրցած սանձել ահաբեկչութիւնը»:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Բոֆի Անան իր կարգին ըսաւ, որ ընդվզած է եւ խիստ ոճով կը դատապարտէ գործողութիւնը: Անան կոչ ուղղեց պաղեստինեան շարժումներուն, որ վերջ տան ամէն ձեւի բռնարարներուն:

(ՌՈՅԹԱՐՁ)

ԸԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
«ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ԿՐԹՎԿԱՆ ՖՈՆՏ»
Ազգային բարերար Աքսոր Գասարճեան ուրախ է յայտարարելու, որ 2002 - 2003 տարեշրջանին, Ազգային վարժարաններու մանկապարտէզի եւ մանկապարտէզի աշակերտութեան համար հաստատած է կրթական ֆոնտ մը:
Գիմումնագիրները պիտի տրամադրուին Հոկտեմբեր 24ԷՆ սկսեալ, Ազգային առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդի գրասենեակէն, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն կէսօրը ետք ժամը 2:00:
«ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ԿՐԹՎԿԱՆ ՖՈՆՏ»

ՓԱՎՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՎ ԺԸՆԵՒԻ ՄԻՋ-ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐՆԵՐ

ՆՈՐ ՄՂՈՒՄ ՀԱՐԿ Է ՏԱԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ-ԻՍԼԱՄ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ, ԱՄԷՆ ՏԵՂ ՈՒ ԱՄԷՆ ՄԱԿԱՐԳԱԿԻ ՎՐԱՅ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հինգ օր է Վեր շարունակվող քրիստոնեայ-իսլամ միջազգային համագումարին որպես ատենապետ, փակումը կատարելով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոս ըսաւ. «Քրիստոնեայ-իսլամ գոյակցութեան պատմութիւնը լեցուն է դժուարութիւններով ու գործակցութեամբ, լարուածութիւններով ու փոխադարձ հասկացողութեամբ: Պէտք է ըլլայ իրապաշտ, սակայն միշտ լաւատես: Մենք տարբեր կրօնական ու բարոյական արժէքներ ունինք: Պատմական տարբեր փորձառութիւններ ունինք, տարբեր մշակութիւններ ու միջավայրեր կու գանք: Տարբեր ենք, ու պիտի մնանք տարբեր- սա Աստուծոյ ստեղծագործութեան մաս կը կազմէ: Զփորձենք միաձուլութիւն յառաջացընել մեր կենցաղակերպին, մտածելակերպին ու գործելակերպին մէջ: Զանազանութիւնը աստուածատուր իրականութիւն մը ըլլալով հանդերձ, ան նաեւ ձեռնապէս կը նպաստէ մարդկային յառաջդիմութեան: Երկխոսութեան նպատակը պէտք է ըլլայ՝ փոխադարձ հասկացողութիւն, յարգանք ու վստահութիւն եւ մանաւանդ այս սկզբունքներուն վրայ կանգնած գործակցութիւն: Ներկայ աշխարհի հրամայականները կը պահանջեն, որ քրիստոնեաներ ու իսլամներ ամէն տեղ, ամէն մակարդակի վրայ եւ ընկերութեան կենսոյթի բոլոր մարզերէն ներս, միասնաբար գործակցութեան ճամբաներ որոնեն: Մենք նոյն աշխարհին, մարդկային նոյն պատմութեան, նոյն ընկերութեան մաս կը կազմենք: Ներկայ աշխարհը քանդած է ամէն տեսակ պատեր ու կամրջած ամէն տեսակ հեռուորութիւններ: Մենք փաստօրէն միասին կ'ապրինք: Մեր գոյակցութիւնը պէտք է փոխադարձ հասկացողութեամբ ու գործակցութեամբ ամրապնդել: Այս համագումարը ճիշդ մըն էր այս ուղղութեամբ: Նման ճիշդ պէտք է բազմաձեւ ի խնդիր կրօններու ու ժողովուրդներու միջեւ խաղաղ գոյակցութեան առաւել ամրապնդման» ըսաւ վեհափառ հայրապետը:

Համագումարը իր վերջին երկու օրերու նիստերուն ընթացքին բաժնուեցաւ երեք խումբերու, ուր լայնօրէն քննարկուեցան քրիստոնեայ-իսլամ երկխոսութեան, գոյակցութեան ու գործակցութեան կապուած շարք մը հարցեր: Այս խումբերու ատենապետները ընդհանուր համագումարին գրաւոր ներկայացուցչին իրենց քննարկումներուն արդիւնքները:

Համագումարը վերջին օրը կատարեց իր պաշտօնական յայտարարութիւնը, ուր ամփոփ կերպով կը ներկայացուէին թէ՛ վեհափառ հայրապետին, թէ՛ դասախօսներուն եւ թէ՛ խումբերու քննարկումներուն ճամբով արտայայտուած տեսակէտները, մտահոգութիւններն ու առաջարկները: Այսպէս՝ համագումարը իր տեղեկագիրին մէջ շեշտեց հետեւեալ կէտերը:

- 1) Բազմազանութիւնը Աստուծոյ պարգեւն է տրուած մարդկութեան: պէտք է պահել եւ աւելի զարգացնել զանիկա: 2) Քրիստոնեայ իսլամ կրօններ կարիքը ունին աւելի լայն ու ճշգրիտ փոխադարձ ճանաչման: 3) Կրօնը պէտք է շահագործուի քաղաքական, տնտեսական, անձնական եւ այլ նպատակներուն: 4) Ահաբեկչութիւնը դատապարտելի է իր բոլոր ձեւերով ու արտայայտութիւններով: 5) Դաստիարակութիւնը դպրոցներէն սկսեալ անհրաժեշտութիւն է բազմակրօն ընկերութեան մէջ: 6) Երկու կրօնները յատուկ կարեւորութիւն պէտք է տան մարդկային իրաւունքներու, փոքրամասնութիւններու կապուած խնդիրներուն: 7) Արդարութեան վրայ հիմնուած խաղաղութեան համար պէտք է լրջօրէն գործակցին քրիստոնեայ եւ իսլամ կրօնները: 8) Քրիստոնեայ-իսլամ գործակցութեան կառուցման պէտք է յառաջացնել յատկապէս տեղական մակարդակի վրայ:

Համագումարի յայտարարութեան որդեգրուած են ետք, վեհափառ հայրապետը առիթ տուաւ ժողովականներուն, որ իրենց տեսակէտները յայտնեն յառաջիկայ աշխատանքներու գծով: Բոլոր ներկաներուն տեսակէտը այն էր, որ հոս ու հոն գումարուող եւ յատկապէս քարոզչական ու մակերեսային ընդթ ունեցող նախաձեռնութիւններէ հեռու պէտք է մնալ եւ նման ծրագրուած ու լուրջ նախաձեռնութիւններու պէտք է դիմել յառաջիկային, որպէսզի իրապաշտ ու ամբողջական քննարկումի ենթակուին քրիստոնեայ-իսլամ գործակցութեան յառաջիկայ հեռանկարները: Այս շրջագծին մէջ, նկատի առնելով քննարկուած առարկաներու նկատմամբ թէ՛ իսլամ եւ թէ՛ քրիստոնեայ կողմերու ներքին տարբերութիւնները, առաջարկուեցաւ նաեւ որ իւրաքանչիւր կրօն հարցերու առաւել թելեղացման ու հաւաքական կեցւածքի արտայայտութեան ներքին գործընթաց մը յառաջացնեն:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒՆ



Արիտի եւ Վեր. Հայտնութեան

Երէկ, Երեքշաբթի 22 Հոկտեմբերին, Հայկական համալսարանին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը՝ ի պատիւ լրագրողներուն, ներկայութեամբ տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտիի:

Հանդիպումին բացման խօսքը կատարեց Լուսինա Սերոբեան, որ բարի գալուստ մաղթեց լրագրողներուն եւ յոյս յայտնեց, որ անոնց եւ համալսարանին միջեւ գործակցութիւնը շարունակուի եւ պարգանալ:

Ապա խօսք առաւ համալսարանի տնօրէնը՝ վեր. Փոյ Հայտնութեան, որ անդրադարձաւ լրագրողներուն եւ մասնակցի անհրաժեշտութեան: Ան ըսաւ, թէ տեղեկատուութիւնը ինքնին դպրոց մըն է, որուն դասաւանդութիւնները կ'երկարին ամբողջ կենսոյթի մը վրայ:

Տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի, ցաւ յայտնեց շատ քիչ թիւով լրագրողներու ներկայութեան համար: Ան բոլորին անունով շնորհակալութիւն յայտնեց համալսարանին՝ իր այս նախաձեռնութեան համար: Նախարար Արիտի նշեց, թէ լրագրողները աշխատանք կը տանին այսօր, որպէսզի վաղուան սերունդին համար աւանդ մը ձգեն եւ պատմութեան կերտման համար օժանդակեն: Ան ըսաւ, թէ տեղեկատուութիւնն ու համալսարանը անուղղակի կապ մը ունին իրարու հետ, որովհետեւ երկուքն ալ կը միտին գիտութիւն ջանքելու եւ տեղեկութիւններ փոխանցելու:

ՄԵԾԻ ՏԱՆԵ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՍՐՔՈՒՀԻ ԹԵՐԷՉԻ ՌՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ

Յրանսայէն ժամանակաւոր կերպով Լիբանան փոխադրուած Սրբուհի Թերէզի աճիւններուն ի յարգանս, վերջին երկու ամիսներուն բազմաթիւ Ս. պատարագներ մատուցուեցան Լիբանանի գաղութան վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ, ռեիտաւորներու հոծ բազմութեան ներկայութեան, հատուաբար եւ հոգեւոր խանդավառութեան առիթ հանդիսանալով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. վեհափառ Հայրապետի անօրինումով, Ուրբաթ, 18 Հոկտեմբեր 2002ի երեկոյեան, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գրեշ. Տ. Գեղամ եպ. խաչերեան, Վարդան Արք. Տեմիրճեան եւ վեց միաբան հայրեր եւ խումբ մը քահանայներ Անթիլիասէն ուղղուեցան Լուէզիէի Ս. Աստուածածին մարտիրոս վանքը եւ ընդունուեցան վանքի մեծաւոր Տ. Իլիաս Քմէշտ վարդապետին ու իր միաբանակիցներուն կողմէ:

Լիբանանի թեմի առաջնորդ սրբազան հայրը յայտարարութիւն մը կատարելով յայտնեց, թէ վեհափառ Հայրապետին յատուկ թելադրութեամբ եկած են աղօթելու Սրբուհի աճիւններուն առջեւ: Այնուհետեւ անոնք առաջնորդուեցան Սրբուհի Թերէզի մատուցներու արկունքի դիմաց, որ շրջապատուած էր բազմաշարիւր հաւատացեալներով: Վանքի մեծաւորը հաւատացեալներուն ներկայացուց Անթիլիասի շքախումբը եւ բարձր գնահատեց Արամ Ա. վեհափառ Հայրապետի էջերէն օգին, որ վերջին տարիներուն յատկապէս իր անձին ճամբով կ'արտայայտէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը: Միաբան հայրեր շարականներու երգեցողութեամբ եւ աղօթքներով խոր տպաւորութիւն թողուցին ներկաներու վրայ:

Ը.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

(ՊՐԸՎԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԵԱՆՑ, ԲԱՐՁՐԱՎՈՅՆ ՆԻՃ ԱՊԱՇՏՈՎՈՂ ՀԱՅ ԱՃԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ)

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 25 Հոկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 8:00ին, Անթիլիասի «Արքայեան» Ը.Մ.Ը.Մ. մարզադահլուքային համալիրի, «Սերժ Թովմատեան» սրահին մէջ:

ԵՐԱԿԵՐ

البيق
السفير
النهار
الديار
الاستقبل
الاتحاد

22 Հոկտեմբերի լիբանանեան մամուլը իր առաջին էջով լուսարձակ տակ առած է Հիւսիսային Իսրայէլի մէջ տեղի ունեցած ականուած ինքնաշարժի պայթումը, Իրաքի հարցը, «Էմ. Թի. Վի.» կայանին դատաւարութիւնը եւ կառավարական փոփոխութիւններու մասին տարածախոսութիւնները:

«Սաֆիր» գրած է, թէ «Ժիհաւ» շարժումը իր տարեդարձին առիթով կը սպաննէ 14 իսրայէլացիներ եւ կը վիրաւորէ 50 անձեր:

«Լիւու»-ի համաձայն, իսլամական Ժիհաւը կը պատահաւնէ Կապալի շարժերուն եւ հիւսիսային Իսրայէլի մէջ գործողութիւն մը կը կատարէ:

«Քիֆահ Արապի» նշած է, թէ պաղեստինցի ֆետայի մը իր ականուած ինքնաշարժը պայթեցուց մարդատար ինքնաշարժի մը մօտ. սպանուեցան 14 իսրայէլացիներ եւ 50 ուրիշներ վիրաւորուեցան: Քաղաքական տարակարծութիւնները կը ցնցեն Շարոնի կառավարութիւնը, իսկ Եսաէր Արաֆատ կը յետաձգէ իր կառավարութեան կազմութիւնը:

Ըստ «Տիւր»-ի, Իսրայէլի մէջ բնակեցուցան ապօրինի զենքի մը փակման լուրերը հետաքննելու կը վարձաւճարուին 150 միլիոն արժողութեամբ:

Տեղական այլ լուրերու կարգին «Պայք» գրած է, թէ ընտրական նոր օրէնքի մշակման հարցը դարձեալ օրակարգի վրայ կը դրուի. հաւանական է, որ որդեգրուի 9 նահանգներու հիման վրայ կապուած օրէնքը:

Ըստ թերթին, կառավարութեան փոփոխութեան հարցին լրջութիւնը երեւան պիտի գայ յառաջիկայ օրերուն:

«Տիւր»-ի համաձայն, Ուաշինկթընի Իրաքի հարցով բանաձեռնի նոր նախագիծ մը փոխանցեց ՄԱԿի Արապիան իսրայէլական Կառավարութեան 10 միլիոն տոլարի քաջաւիճ օժանդակութիւն: Ըստ թերթին, ամերիկացիները Շարոնին առաջարկած են 10 միլիոն տոլարի քաջաւիճ օժանդակութիւն: «Նահար» նշած է, թէ Արիէլ Շարոն իր պատճառները

կրկնեց յայտարարելով, որ պիտի միջամտէ՝ եթէ Ուաշինկթընի հարցը չլուծուի. Շարոն նաեւ մտահոգութիւն յայտնեց, որ Իրաքի դէմ հարուածի մը պարագային Իսրայէլի հիւսիսային սահմանը կրնայ բռնկիլ:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Պուշ Դաւիտ, որ առիթ մը պիտի տանք, սակայն Սատամի իշխանութիւնը փոխելու մեր նպատակը չի կրնար փոխուիլ:

Ըստ «Նահար»-ի, Շիրաք երկիրներու մեծամասնութիւնը կը նկատէ Ֆրանսայի հետ՝ Իրաքեան պատերազմի դէմ, իսկ Արապի թագաւորը չի բացառեր թագաւորութեան վերադարձը Իրաք:

«Էմ. Թի. Վի.»-ի հարցին մասին «Անուար» գրած է, թէ Սֆէյր պատրիարք յայտարարեց, որ «Էմ. Թի. Վի.»-ի որոշ ժամանակով դադարեցուցուց պատիւը մը պիտի ըլլար. բայց լրի փակումը անարդար է:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, դատարար մերժեց ընթացք տալ «Էմ. Թի. Վի.»-ի հարցով ներկայացուած բողոքներուն. կայանին փակումը կը շարունակուի մինչեւ վերաքննիչ դատարանին կողմէ հարցին քննութիւնը:

Սլոյ լուրերու կարգին թերթերը նշած են, թէ Ուաշինկթընի մէջ հետաքննելու կը յատկանշուի Կապալի արձակուած իսրայէլական զինուորականներու արձակուածները:

Թերթերը նաեւ լուսարձակ տակ առած են Դամասկոսի այլ յայտարարութիւնը, թէ նախագահ Շիրաքի կեցուածքները կարեւոր պատասխաններ են Սուրիայէն հաշիւ պահանջողներուն համար:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Պուշ Դաւիտ, որ առիթ մը պիտի տանք, սակայն Սատամի իշխանութիւնը փոխելու մեր նպատակը չի կրնար փոխուիլ:

«Քիֆահ Արապի»-ի հարցին մասին «Անուար» գրած է, թէ Սֆէյր պատրիարք յայտարարեց, որ «Էմ. Թի. Վի.»-ի որոշ ժամանակով դադարեցուցուց պատիւը մը պիտի ըլլար. բայց լրի փակումը անարդար է:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, դատարար մերժեց ընթացք տալ «Էմ. Թի. Վի.»-ի հարցով ներկայացուած բողոքներուն. կայանին փակումը կը շարունակուի մինչեւ վերաքննիչ դատարանին կողմէ հարցին քննութիւնը:

Սլոյ լուրերու կարգին թերթերը նշած են, թէ Ուաշինկթընի մէջ հետաքննելու կը յատկանշուի Կապալի արձակուած իսրայէլական զինուորականներու արձակուածները:

Թերթերը նաեւ լուսարձակ տակ առած են Դամասկոսի այլ յայտարարութիւնը, թէ նախագահ Շիրաքի կեցուածքները կարեւոր պատասխաններ են Սուրիայէն հաշիւ պահանջողներուն համար:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Պուշ Դաւիտ, որ առիթ մը պիտի տանք, սակայն Սատամի իշխանութիւնը փոխելու մեր նպատակը չի կրնար փոխուիլ:

«Քիֆահ Արապի»-ի հարցին մասին «Անուար» գրած է, թէ Սֆէյր պատրիարք յայտարարեց, որ «Էմ. Թի. Վի.»-ի որոշ ժամանակով դադարեցուցուց պատիւը մը պիտի ըլլար. բայց լրի փակումը անարդար է:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, դատարար մերժեց ընթացք տալ «Էմ. Թի. Վի.»-ի հարցով ներկայացուած բողոքներուն. կայանին փակումը կը շարունակուի մինչեւ վերաքննիչ դատարանին կողմէ հարցին քննութիւնը:

Սլոյ լուրերու կարգին թերթերը նշած են, թէ Ուաշինկթընի մէջ հետաքննելու կը յատկանշուի Կապալի արձակուած իսրայէլական զինուորականներու արձակուածները:

Թերթերը նաեւ լուսարձակ տակ առած են Դամասկոսի այլ յայտարարութիւնը, թէ նախագահ Շիրաքի կեցուածքները կարեւոր պատասխաններ են Սուրիայէն հաշիւ պահանջողներուն համար:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Պուշ Դաւիտ, որ առիթ մը պիտի տանք, սակայն Սատամի իշխանութիւնը փոխելու մեր նպատակը չի կրնար փոխուիլ:

«Քիֆահ Արապի»-ի հարցին մասին «Անուար» գրած է, թէ Սֆէյր պատրիարք յայտարարեց, որ «Էմ. Թի. Վի.»-ի որոշ ժամանակով դադարեցուցուց պատիւը մը պիտի ըլլար. բայց լրի փակումը անարդար է:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, դատարար մերժեց ընթացք տալ «Էմ. Թի. Վի.»-ի հարցով ներկայացուած բողոքներուն. կայանին փակումը կը շարունակուի մինչեւ վերաքննիչ դատարանին կողմէ հարցին քննութիւնը:

Սլոյ լուրերու կարգին թերթերը նշած են, թէ Ուաշինկթընի մէջ հետաքննելու կը յատկանշուի Կապալի արձակուած իսրայէլական զինուորականներու արձակուածները:

Թերթերը նաեւ լուսարձակ տակ առած են Դամասկոսի այլ յայտարարութիւնը, թէ նախագահ Շիրաքի կեցուածքները կարեւոր պատասխաններ են Սուրիայէն հաշիւ պահանջողներուն համար:

Հայ Կաթողիկէ ՄԵՍՐՈՊԵԱՆ Արուեստից Վարժարան

20-ԱՄԵԱԿԻ ՆՈՒԲՈՒՆՈՒՆԵՐՈՒՆ

Համակարգիչի լրի դասընթացք՝ ամսական միայն 25 հազար լ.ն.

Windows, Word, Excel, PowerPoint, Outlook, Internet, Illustrator, Photoshop, Corel Draw, Quark Xpress, Access, Project, Visual Basic, Visual FoxPro, Dolphin, AutoCAD, AutoArchitect, 3D Studio Max, Cakewalk - Finale, Front Page, HyperText Markup Language

260504
www.mesrobian.com

ՄՕՏ ՕՐԵՆ FUEL CARD

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՖՈՒՆՏ

IGOL MOTOR OIL FUEL CARD

Միջապալին Քաղաքական Կեանք

ԿԵՐՋԻՆ ԴԱՏԱՍԱՆԻ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ.

ԻՐԱՔ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ԿՈՂՄԵ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԲՈՆԱԳՐԱՒՈՒՄԸ

Ջարմանալի չէ, որ իրաքի դէմ զինուորական գործողութեան որոշումը ջատագովող ամենէն բարձր եւ եռանդուն ձայնը կը պատկանի Իսրայէլի Լիբերալ կուսակցութեան ղեկավարած կառավարութեան եւ անոր կողմէ գործի լծուած մեքենային:

Պատերազմը ծանուցելը այնքան հաճելի զբաղում մը դարձած է պաշտօնական թէ՛ ԱԼԼԻԻՆ համար, որ Շարոն ստիպուած զգաց ոճի միջոցառման ակամայ կողմը ընելու իր խմբակիցներուն:

Իրաքը Իսրայէլի սպառնացող «ուզմամբարական վտանգ» նկատելու կողքին, Իսրայէլ ունի զանազան այլ շարժառիթներ. անոնք են՝ արաբական աշխարհը տկարացնելը, շրջանին մէջ Իսրայէլի «ուզմամբարական գերակայութիւնը» պահպանելը, եւ պաղեստինցի ժողովուրդին ու ղեկավարութեան յանդէպ տկարացումը: Մետալին միւս կողմը կը գտնուի պատերազմի ընթացքին իրաքի կողմէ յարձակման ենթակրելու Իսրայէլի մտավախութիւնը, մասնաւոր՝ երբ ճակատումը ըլլայ բուռն, եւ իրաք մտածէ, թէ՛ «ուրիշ ոչինչ ունի կորսնցնելիք»: Վերջերս, այդ կարելիութիւնը հաստատուած նկատելով, Իսրայէլացիներ արդէն սկսած են խօսիլ «Երբ»ին եւ «Ինչպէս»ին մասին: Թէեւ բացայայտօրէն պատերազմ քաջալերողները փոքրամասնութիւն են, սակայն կան պատերազմի մասնակցելու բուռն ջատագովներ: Սակայն պատերազմին մասնակցելու համար պէտք է շօշափելի պատրուակ մը, որուն իրեն հետեւանք՝ Իսրայէլ ունենայ «ինքզինք պաշտպանելու իրաւունքը»: Հետեւաբար իրաքի կողմէ Իսրայէլի դէմ յարձակումի որեւէ քայլ լաւ պատրուակ մը կու տայ կառավարութեան, որ արդէն սպառնացած է կորիզային հրթիռներով իրաքը ջնջել քարտէսէն:

Առաւել, Ուաշինգթոնը եւս կը ջանայ Իսրայէլը հետեւ պահել վերջին դատաստանի իր ծրագրերէն:

Պաղեստինցիները, իրենց կարգին, մտահոգ են, որ Իսրայէլացիները իրաքեան պատերազմով աշխարհի բազմաթիւ իրաքի ղեկավարութիւնը օգտագործելով՝ կրնան իրագործել պաղեստինեան հարցին վերջնական լուծում տալու իրենց ծրագիրը: Պատերազմին դէմ եղող Իսրայէլացիները, միջազգային կազմակերպութիւններ եւ անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ պաղեստինցիներ բազմիցս զգուշացուցին «տեղափոխման» վերջնական լուծումէն, որ կը վերաբերի պաղեստինցիներու բռնազաղթին կամ Իսրայէլի կողմէ ճգնաժամային մարտերուն: Դրոցի արար երկիրները բաւական լուրջի առած են այդ սպառնալիքը՝ իրենց սահմանները փակելով Իսրայէլի դէմ (յատկապէս

Յորդանանն ու Եգիպտոսը, որոնք խաղաղութեան պայմանագիր կնքած են Իսրայէլի հետ) եւ նշած են, որ այդպիսի քայլ մը պատերազմի յայտարարութիւն պիտի նկատեն: Սակայն Իսրայէլ կրնայ շարք մը ուրիշ ձեւերով աստիճանաբար իրագործել Պաղեստինը ոչնչացնելու իր ծրագիրը:

Իսրայէլ կրնայ աւելի սեղմել արդէն իսկ գոյութիւն ունեցող շրջափակումը՝ տնտեսական, կրթական առողջապահական եւ հոգեբանական յանգրեւել տառապանք պատճառելով պաղեստինցիներուն: Յեղափոխ մաքրագործումը կրնայ իրագործուիլ ընտրուած ձեւով՝ թիրախ ունենալով ղեկավարութեան եւ հանրութեան «անբարձր» տարրերը: Աւելի վաղու միջոցներ են գաղթականացնելու, քաղաքային կեդրոններու եւ աւելի մեկուսի գիւղական շրջաններուն դէմ իրագործուած «զինուորական գործողութիւնները»:

Այդ ահաւոր միջոցառումներուն դրոշմապատճառը կրնայ ըլլալ պաղեստինցի մահատի մը կամ խուճի մը կողմէ գործողութեան յարձակում մը կամ Սատտամին նեցուկ կանգնելու յայտարարութիւն մը: Ամէն պարագայի, գրանման տակ եղող պաղեստինցիները իրենք զիրենք խոցելի թիրախներ կը նկատեն իրաքի դէմ պատերազմի պարագային:

Պաղեստինցիները հաւաքաբար կը ջանան կանգուն մնալ իրենց հողին վրայ եւ դէմ դնել մաքրագործման կամ արտաքսման որեւէ փորձի: Շփոթն ու վախը մերժելու գիտակցութեամբ անոնք վերատեսուցեան կ'ենթարկեն զիմադրութեան իրենց ընտանքները՝ կեդրոնանալով ժողովրդային խաղաղ դիմադրութեան միջոցներուն վրայ:

Պաղեստինեան շրջաններու զինուորական վերջին գրաւումը նաեւ առիթ տուաւ զիմադրութեան աւելի շինիչ ձեւերու զարգացման:

Այս բոլորը մտի ունենալով՝ պէտք է ըսել, որ պաղեստինցիները պաշտպանելու եւ Իսրայէլի ահաւոր ծրագրերը արգելելու ամենէն ազդեցիկ միջոցը կը մնայ միջազգային հանրութեան ձեռնարկումը: Ամերիկացի եւ եւրոպացի պատասխանատուները պէտք է անդրադառնան, որ աւելի զբաղանք պահանջութիւնն ու ներգործօն միջամտութիւնը անխուսափելի է հարցին լուծման համար: Ժամանակը եկած է արդէն գտնելու վրայ հակակշիռ հաստատելու ծրագրի մը՝ փոխանակ ընտրով տագնապներ լուծելու կամ



մասնակի վնասներ սահմանափակելու: «Հակակշիռ» ըսելով կը հասկնանք խաղաղարար ուժի միջամտութիւն եւ քաղաքային մասնագէտներու եւ արհեստավարներու ներգրծում՝ իրագործելու համար խաղաղութեան հաստատման եւ պահպանման, ինչպէս նաեւ երկիրը վերաշինութեան ծրագրերը:

ՄԱԿԻ որոշումները կը տրուին գործադրուելու համար: Քաղաքայիններու դէմ վարագուցութիւնը ընդունելի չէ: Կարելի չէ արտօնել, որ վերջին շրջափակումը յարատեւէ: Չկան միակողմանի կամ գինուորական լուծումներ այս հարցին: Միացեալ Նահանգներու պատկերացուցած երկու պետութեան լուծումը եւ 5 Յունիս 1967ին գրաւուած հողերը վերադարձրելու որոշումը պէտք է իրագործուին: Իսրայէլի գինուորական գործողութիւնները (վերադարձումը, սպանութիւնները, արգելափակումները, շրջափակումները եւ տնտեսական ու մարդկային իրաւանք բռնարարութիւնները) պէտք է կասեցուին: Իսրայէլ պէտք է կատարելապէս հնազանդի միջազգային օրէնքին: Թէ՛ Պուշ եւ թէ՛ Շարոն պէտք է հասկնան, որ հարցը չի վերաբերիլ ժամանակակուր լուծումներուն նախքան Մոցի նոր փոփոխելի պայմանները, այլ պէտք է լուրջ, ընդգրկուող եւ արդար լուծումներ տալու պէտք է անկայունութիւն ստեղծող պատճառներուն, որոնք պէտք է լուծուին երկէ՛ր, բայց անպայման այսօր, եթէ կ'ուզենք խուսափիլ մեծ աղէտէն:

ՀԱՆԱՆ ԱՇՐԱՌԻ

Համացանցի «Միտիա Մոնիթորը» կայք

www.mesrobian.com

Արձանագրութիւններու կողմնակալութիւնը 260504

JEWELRY Design
DIAMOND Setting
WAX Molding
GEMOLOGY

HAIR STYLING
MAKE UP

Վարձատրուող արհեստագործներ կողմնակալութիւնը

Tele-Video & Radio Repair
Car Electricity & Electronics

Վարձատրուող արհեստագործներ կողմնակալութիւնը

COMPUTER
Software & Hardware
INTERNET

Վարձատրուող արհեստագործներ կողմնակալութիւնը

English
For International Business - TOEFL - Cambridge University Certificate + 8 օտար լեզուներ

MESROBIAN
TECHNICAL COLLEGE
3 օտար լեզուներ
20 ամեայ փորձառութիւն

TICKETING
IATA
Գործի Բաց Անցագիր Ուզած երկրորդ մէջ

LCCIEB
Business
Մասնագիտութիւններ վկայականը՝ Լոնտոն

B.T.
Համալսարան եւ Գործ
Երկու ընտրութիւն մէկ վկայականով

ՀԱՐԻՐ ՀԱՉԱՐ ՆԱՍԱԿ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

«Թըրքի Տէյի Նիուզ» բերթին համաձայն, «Մայր Հայրենիք» կուսակցութեան Պոլսոյ մասնաճիւղի ղեկավարութեան թեկնածու Պիլիէնք Աքարչալի վերջերս յայտնած է, թէ կուսակցութիւնը պիտի կազմակերպէ «Եգիպտական եւ Երուսաղէմի Միութեան հարիւր հազար նամակներ» նախագիծը: Աքարչալի ըսած է, թէ կուսակցութիւնը որոշած է կող ուղղել բոլոր բուրքերուն, որպէսզի Երուսաղէմի Միութեան խորհրդարանականներուն եւ անդամ երկիրներու նախագահներուն նամակներ ուղարկեն Միութեան անդամակցելու թուրքի վեճակները ցոյց տալու համար:

«Կակնկալներ, որ ոչ կառավարական կազմակերպութիւններ եւ այլ հաստատութիւններ գործակցին այս նամակարարութիւնը: Չենք ուզեր զայն սահմանափակել «Մայր Հայրենիք» կուսակցութեամբ», ըսած է Աքարչալի: Ան զիտել տուած է, որ վարչապետ Պիլիէնք Էնեւիք, արտաքին գործոց նախարար Շիւքրի Սիմա Կիւրեյ եւ կուսակցութիւններու ղեկավարներ պէտք է յանդէպ աշխատանք տանին թուրքի Միութեան անդամակցութիւնը արագացնելու համար:

ԳԵՐՄԱՆԻԱ՝ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՄԵՃԱԳՈՅՆ ԳՈՐԾԱԿԻՅ

Թուրքիոյ վիճակագրական պետական հիմնարկին համաձայն, երկրին առեւտրական մեծագոյն գործակիցը կը հանդիսանայ Գերմանիա: Ըստ հիմնարկին տեղեկութիւններուն, Յունուար-Յունիս 2002 ժամանակամիջոցին Գերմանիա թուրքիայէն ներածած է 2,616 միլիարդ տոլար արժողութեամբ արտադրութիւններ, իսկ դէպի թուրքիա արտածած է 2,755 միլիարդ տոլար արժողութիւններ:

